19սեպտեմբերի 2012թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

2012թ. հուլիսի 19-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի ընտրության կազմակերպմանն անցկացման վերաբերյալ

Ազգային ժողովի հարգարժան Նախագահ

Հարգելի պատգամավորներ

Թույլ տվեք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ձեր ուշադրությանը ներկայացնել 2012թ. հուլիսի 19-ի ԼՂՀ Նախագահի հերթական ընտրության կազմակերպման և անցկացման վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդագրությունը:

ԼՂՀ Ազգային ժողովի 2012թ. մարտի 29-ի N 001 հայտարարության համաձայն Հանրապետության Նախագահի հերթական ընտրության օր է նշանակվել 2012թ. հուլիսի 19-ը: Դրան անմիջապես հաջորդել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստը, որտեղ քննարկվել և հաստատվել են Հանրապետության Նախագահի ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցն ու աշխատանքային պլանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի N17/48 որոշմամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված բազմաբնույթ գործառույթների կատարումն ապահովելու համար նշված որոշումը ներկայացվեց ընտրությունների հետ առնչվող բոլոր մարմիններին (նախարարություններ, տարածքային ընտրական հանձնաժողովներ, վարչակազմեր, իրավապահ մարմիններ և այլն) և տեղադրվեց կենտրոնական ընտրական հանձնաժողովի միանգամայն նորացված cec.am կայքում:

Օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ 2012թ. ապրիլի 20-ից մինչև 2012թ. մայիսի 5-ը Հանրապետության Նախագահի թեկնածու ինքնաառաջադրվելու համար կենտրոնական ընտրական հանձնաժողով են դիմել ԼՂՀ 4 քաղաքացիներ.

1. Բակո Սահակի Սահակյանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող Նախագահ, անկուսակցական.
2. Վիտալի Միխայիլի Բալասանյանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր, անկուսակցական.
3. Արկադի Իվանի Սողոմոնյանը՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսումնագիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, անկուսակցական:
4. Վալերի Սերգեյի Խաչատրյանը՝ թոշակառու, անկուսակցական:

ԼՂՀ-ում գործող կուսակցությունները Հանրապետության Նախագահի թեկնածու չեն առաջադրել:

Առաջնորդվելով ԼՂՀ ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 71-րդ հոդվածով, քննարկելով ԼՂՀ Նախագահի թեկնածու ինքնաառաջադրված քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը, կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2012թ. հունիսի 15-ի N 19/54 որոշմամբ Հանրապետության Նախագահի թեկնածուներ գրանցեց Վիտալի Միխայիլի Բալասանյանին, Վալերի Սերգեյի Խաչատրյանին, Բակո Սահակի Սահակյանին, Արկադի Իվանի Սողոմոնյանին:

Քվեարկության օրվանից 10 օր առաջ՝ հուլիսի 9-ին ԼՂՀ Նախագահի թեկնածու Վալերի Խաչատրյանի ինքնաբացարկի դիմումի համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովը նրա գրանցումն ուժը կորցրած ճանաչեց:

Մյուս 3 թեկնածուների ազգանունները այբբենական կարգով ընդգրկվեցին ԿԸՀ կողմից հաստատված քվեաթերթիկի նմուշի մեջ:

Օրենքով սահմանված ժամկետում՝ մինչև 2012թ. հունիսի 4-ը լիազոր մարմնի, տարածքային ընտրական հանձնաժողովների և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ արձանագրությամբ կազմավորվել է 274 ընտրական տեղամաս, որից մեկը Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչությունում՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավորապես գտնվող կամ բնակվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովելու համար:

Դեռևս 2012թ. մայիս-հունիս ամիսներին բոլոր շրջաններում կազմակերպվել և անցկացվել են տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների մասնագիտական դասընթացներ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը մասնագիտական դասընթացներ անցած և որակավորում ստացած անհրաժեշտ անդամներով համալրելու նպատակով: Դասընթացներն անցկացվել են նորացված ծրագրերով և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակված ԼՂՀ ընտրական գործընթացի վերաբերյալ կինոֆիլմի ցուցադրմամբ և դիտողական միջոցների օգտագործմամբ:

Նախապատրաստական աշխատանքների կարևոր բաժին է կազմում Նախագահի ընտրության վերաբերյալ փաստաթղթերի պատրաստումը: Ժամանակին լուծվել են ընտրությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման, մեթոդական և քարոզչական նյութերի պատրաստման, քվեարկության սենյակների կահավորման, քվեաթերթիկների տպագրման և ընտրական հանձնաժողովներին դրանց առաքման հարցերը:

ԿԸՀ կողմից մշակվել, հաստատվել և ընտրական հանձնաժողովներին, շրջվարչակազմերին, նախարարություններին, լիազոր մարմնին, շահագրգիռ ծառայություններին ու կազմակերպություններին են առաքվել ընտրության համար անհրաժեշտ իրավական ակտերը, կարգերը, ձևաթղթերը, արձանագրությունների ձևեր և այլ փաստաթղթեր:

Նորացված տարբերակով կազմվել, հրատարակվել և ընտրական հանձնաժողովներին, ԼՂՀ Նախագահի թեկնածուների շտաբներին, դիտորդներին և վստահված անձանց է տրամադրվել «Տեղամասային ընտրական հանձնաժողովների համար ուղեցույց», «Վստահված անձանց ձեռնարկ», «Դիտորդի ձեռնարկ» գրքույկները:

Պետք է նշել, որ ընտրական հանձնաժողովները և զանգվածային լրատվության միջոցները անհրաժեշտ աշխատանքներ են իրականացրել ընտրությունների հրապարակայնությունն ապահովելու ուղղությամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերը, նրա որոշումները, միջոցառումները և ընդհանրապես ընտրական հանձնաժողովների գործունեությունը լուսաբանվում էին տեղական և Հայաստանի Հանրապետության ԶԼՄ-ներով:

Ընտրությունների հրապարակայնության ապահովման, ընտրական հանձնաժողովների գործունեության լուսաբանման գործում մեծ դեր է ունեցել ԿԸՀ cec.am կայքէջը, որտեղ անմիջապես տեղադրվել են ընտրական համակարգի ամենաթարմ նորությունները, հայտարարություններն ու հաղորդագրությունները:

Յուրաքանչյուր ընտրողի համար հնարավորություն էր ընձեռված էլեկտրոնային կայքէջում որոնելու իր ընտրական տեղամասը և տեղամասային կենտրոնը, որտեղ նա պիտի մասնակցեր քվեարկությանը:

Ընտրությունների ընթացքում և ընդհանրապես անխափան էլեկտրոնային կապ է ապահովված կետրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների միջև:

Ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների գիտությանը հասցնելու նպատակով մշակվեցին, հրատարակվեցին և բոլոր ընտրական տեղամասեր առաքվեցին անհրաժեշտ դիտողական նյութեր, ընտրական թեմատիկայով որակյալ պաստառներ, «Քվեարկության կարգը» գունազարդ պաստառը, քվեաթերթիկի նմուշը, թեկնածուների կենսագրականները և այլն:

Հեռուստատեսությամբ պարբերաբար հնչում էին ԿԸՀ հայտարարություններ ընտրական դասընթացների կազմակերպման ժամկետների, լրագրողների և դիտորդների հավատարմագրման, ընտրացուցակների ճշգրտման, ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչությունում ընտրական տեղամաս կազմավորելու մասին և այլն:

Քվեարկությունից 10 օր առաջ անընդմեջ հեռարձակվում էր քվեարկության ընթացքի վերաբերյալ ԿԸՀ կողմից պատրաստված տեսահոլովակը: Քվեարկության ընթացքը և արդյունքները լուսաբանելու, դիտորդների և լրագրողների հետ տարվող աշխատանքները կանոնակարգելու գործում անհրաժեշտ նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներ է իրականացրել ԿԸՀ մամլո կենտրոնը:

Ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում կարևոր փուլ հանդիսացավ նախընտրական քարոզչությունը:

Ղեկավարվելով ԼՂՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածով՝ 2012թ. հունիսի 20-ին կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանեց զանգվածային լրատվության միջոցներով քարոզչություն իրականացնելու նպատակով ԼՂՀ Նախագահի թեկնածուներին հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը՝ վիճակահանությամբ որոշված հերթականությամբ, որի համաձայն 2012թ. հունիսի 20-ից մինչև հուլիսի 17-ի ժամը 24.00-ն յուրաքանչյուր թեկնածու կարող էր օգտվել հանրային հեռուստառադիոեթերաժամերից ոչ ավելի, քան 30 րոպե անվճար և մինչև 80 րոպե՝ վճարովի հիմունքներով:

Նախընտրական քարոզչությունն ընդհանուր առմամբ անցել է քաղաքակիրթ մթնոլորտում, հիմնականում իրենց ծրագրերի շուրջ քննարկումների, ընտրողների հետ հանդիպումների, ԶԼՄ-ներով հանդես գալու միջոցով:

Թեկնածուների քարոզչական նյութերը տեղադրելու համար ԿԸՀ պահանջով և օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարները հատկացրել են հատուկ տեղեր՝ հավասար մակերեսով: Պատահական տեղերում քարոզչական նյութեր տեղադրելը բացառելու նպատակով ԿԸՀ-ի հրահանգով ավելացվել է հատուկ տեղերում տեղադրված վահանակների քանակը, առանձնապես Ստեփանակերտ քաղաքում և շրջկենտրոններում:

Թեկնածուները հիմնականում պահպանել են նախընտրական քարոզչության կազմակերպման սահմանված կարգը:

Ընտրական հանձնաժողովները վերահսկել են նախընտրական քարոզչության կարգի պահպանումը: Քարոզչության կարգի խախտման կամ քարոզչական նյութերի տպագրումը պահանջվող ձևից տարբերվելու դեպքում ԿԸՀ կողմից զգուշացվել և նախընտրական քարոզչության պատասխանատուների կողմից երկօրյա ժամկետում վերացվել են խախտումները և շտկվել բացթողումները:

Հանրապետության Նախագահի ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացի կազմակերպական – տեխնիկական ապահովման գործում կարևոր նշանակություն ունեցավ ԼՂՀ կառավարության 2012թ. հունիսի 15-ի «2012թ. հուլիսի 19-ի Հնարապետության Նախագահի ընտրության գործընթացում ընտրական հանձնաժողովներին աջակցության մասին» N 392 – Ա որոշումը, որի հանձնարարականների կատարումը շահագրգիռ մարմինների կողմից մեծապես նպաստեց ընտրությունները ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, կազմակերպված և պատշաճ մակարդակով անցկացնելուն:

Հանրապետության Նախագահի ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում մեծ ուշադրություն հատկացվեց քվեարկության կազմակերպմանն ու անցկացմանը:

Ժամանակին կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատվել է Հանրապետության Նախագահի ընտրության քվեաթերթիկի ձևը և շարադրանքը, որի նմուշը և «Քվեարկեք այսպես՝ V» կարգախոսը փակցվել է բոլոր ընտրական կենտրոններում՝ ընտրողներին ծանոթացնելու համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեաթերթիկները պատվիրել և «Դիզակ պլյուս» ՍՊԸ կողմից թողարկվել են պաշտպանիչ ջրանիշով՝ դրանց կեղծումը կամ պատճենահանումը բացառելու նպատակով:

ԼՂՀ Նախագահի ընտրությունները մեծ հետաքրքրություն առաջացրին ինչպես մեր հարևան հանրապետություններին, այնպես էլ միջազգային հանրությանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվեցին և ընտրությունների ընթացքին հետևցին 21 տեղական դիտորդներ 5 հասարակական կազմակերպությունից և 90 միջազգային դիտորդներ 22 երկրներից:

Ընտրությունների ընթացքը լուսաբանում էին մոտ 100 տեղական և միջազգային լրագրողներ: Նրանք հնարավորություն ունեցան անարգել հետևել քվեարկության ընթացքին ԼՂՀ գրեթե բոլոր ընտրատեղամասերում:

Դիտորդների և լրագրողների կարծիքները ընտրության կազմակերպման և անցկացման, ինչպես նաև քվեարկության ընթացքի մասին նրանք հայտնեցին Արցախի հանրային հեռուստատեսությամբ, ԿԸՀ մամլո կենտրոնում կազմակերպված մամլո ասուլիսների ժամանակ, ինչպես նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովին հանձնված համապատասխան եզրակացություններում: Նրանց համոզմամբ ընտրություններն ընթացել են արդար ու թափանցիկ և ժողովրդավարական, ինչն էլ մեր երկրում ժողովրդավարության նորմերի արմատավորման և զարգացման ճանապարհին առաջընթացի ևս մեկ քայլ է:

ԼՂՀ Նախագահի ընտրությունը աչքի ընկավ նաև ընտրողների ակտիվ մասնակցությամբ: Վերջնական արդյունքների համաձայն հանրապետության 99227 ընտրողներից քվեարկությանը մասնակցել են 72598 ընտրողներ կամ նրանց 73.5 %-ը:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հիմք ընդունելով ԼՂՀ Նախագահի 2012թ. հուլիսի 19-ի ընտրության արդյունքների վերաբերյալ 274 տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները և տարածքային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ աղյուսակները՝ 2012թ. հուլիսի 22-ի իր նիստում ամփոփեց Նախագահի ընտրության վերջնական արդյունքները:

Յուրաքանչյուրթեկնածուինկողմքվեարկվածքվեաթերթիկներիթիվըկազմումէ՝

Բալասանյան Վիտալի Միխայիլի - 22967 կամ 32.51%,

ՍահակյանԲակոՍահակի – 47095 կամ 66.65%,

Սողոմոնյան Արկադի Իվանի – 593 կամ 0.84%:

Բոլոր թեկնածուներին կողմքվեարկված՝ 70655 ընտրողների կեսից ավելի քվեները, այն է 66,65%-ը ստանալու կապակցությամբ ԼՂՀ ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ***Բակո Սահակի Սահակյանը համարվեց ընտրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ:***

ԼՂՀ Նախագահի 4 թեկնածուները ներկայացրել են ընտրական գրավի մուծման անդորրագրերը՝ 1 միլիոնական դրամի չափով: Կայացած ընտրությունների արդյունքներով քվեաթերթիկների թվի 5 կամ 5–ից ավելի % կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած ընտրված ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի և Նախագահի թեկնածու Վ. Բալասանյանի ընտրական գրավի գումարները վերադարձվել են իրենց, իսկ Արկադի Սողոմոնյանի ընտրական գրավի գումարը փոխանցվել է պետբյուջե՝ 5%-ից պակաս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու պատճառով: Պետբյուջե է փոխանցվել նաև Վ. Խաչատրյանի ընտրական գրավը:

4 թեկնածուներից 3-ն են հիմնել նախընտրական հիմնադրամներ, որոնցում կատարված մուծումների ընդհանուր գումարը կազմում է 10 350 000 դրամ, իսկ ծախսերը՝ 10 349 960 դրամ:

Նախագահի թեկնածուներից Վալերի Խաչատրյանը նախընտրական հիմնադրամ չի ձևավորել, ինչի մասին գրավոր տեղեկացրել է կենտրոնական ընտրական հանձնաժողովին, իսկ քվեարկությունից 10 օր առաջ ԿԸՀ որոշմամբ նրա գրանցումն ուժը կորցրած է ճանաչվել՝ թեկնածուի դիմումի համաձայն:

Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում քաղաքացիների կողմից դիմում-բողոքները հիմնականում բանավոր բնույթի էին և կրում էին կազմակերպական-տեխնիկական բնույթ, որոնք ընտրական հանձնաժողովների գործուն միջամտությունից հետո լուծում էին ստանում, վերացվում էին թերացումները կամ բացթողումները:

Ընտրությունների ընթացքում կենտրոնական ընտրական հանձնաժողով է մտել 3 դիմում-բողոք՝ ԼՂՀ Նախագահի թեկնածու Վիտալի Բալասանյանի լիազոր ներկայացուցիչ Էդուարդ Աղաբեկյանի կողմից: Դիմումներից մեկը վերաբերում էր նախընտրական քարոզչության ընթացքում քարոզչական նյութերի ոչ ճիշտ ձևավորմանը: Մյուս երկու դիմումները վստահված անձանց վկայականների լրացման կարգի, որոշ տեղամասերում նրանց իրավունքների անտեսման և վստահված անձի նկատմամբ կոպտություն ցուցաբերելու վերաբերյալ էին:

Բոլոր դիմումները հնարավորինս կարճ ժամկետում, իսկ քվեարկության օրը ստացված դիմումը նույն օրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի և համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչների միջոցով քննարկվել, միջոցներ են ձեռնարկվել և գրավոր տեղեկացվել դիմումատուին, իսկ վստահված անձի նկատմամբ կոպտության ցուցաբերման փաստի ճշտությունը ստուգելու և մեղավորին պարզելու նպատակով ԿԸՀ դիմել է ԼՂՀ ոստիկանություն, որի ուսումնասիրման արդյունքում դիմումում նշված փաստերը չեն հաստատվել:

Ընտրությունների արդյունքների բողոքարկման վերաբերյալ ԿԸՀ, ՏարԸՀ և Գերագույն դատարան չի մտել և ոչ մի դիմում-բողոք:

Ներկայում կենտրոնական ընտրական հանձնաժողովը ուսումնասիրում է ԼՂՀ Նախագահի ընտրության կազմակերպման և անցկացման բոլոր մանրամասները, որոնք կապված են ընտրական օրենսգրքի որոշ հոդվածների փոփոխման անհրաժեշտության, մի շարք հոդվածներ իրար հակասման հետ:

Կան նաև բազմաթիվ առաջարկություններ նոր ընտրական օրենսդրության ընդունման վերաբերյալ:

ԼՂՀկենտրոնականընտրական
հանձնաժողովինախագահ՝ **Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**